

Դպրոցականների առարկայական օլիմպիադա

Մարզային փուլ

Հայ գրականություն-2018

/տևողությունը – 150 րոպե/

11-րդ դասարան

- 1.Ե՞րբ է գրվել <<Թմկաբերդի առումը>> պոեմը. ի՞նչ է հուշում վերնագիրը. ինչո՞ւ <<առումը>>: Որտեղի՞ց է լսել հեղինակը այդ ասքը: Փորձի՞ր արդարացնել Թմկա տիրուհուն: 4մ.
- 2.Ո՞վ է Լևոն Շանթը: Ե՞րբ է գրվել <<Հին աստվածներ>> դրաման. ինչո՞վ է պայմանավորված վերնագիրը: Ի՞նչ երազների մասին է խոսքը դրամայում. ո՞վ է բերում այդ երազները և ո՞ւր են անհետանում դրանք: Գրի՞ր 10 տող՝ Իջե՛ք, իջե՛ք..... 4մ.
- 3.Ո՞ր բանաստեղծությունն է Մեծարենցը անվանել <<Արդի մարդուն Հայր մերը>>. ինչո՞ւ: Գրի՞ր մեկ քառատող և մեկնաբանի՛ր: Ի՞նչ առնչություն կարող ես գտնել Տերունական աղոթքի հետ: 4մ.
- 4.Ո՞վ է Ատոմ Յարճանյանը. ի՞նչ գրական անունով է հայտնի. ո՞վ է այդպես կնքել նրան: Մեկնաբանի՛ր <<Պարը>> բանաստեղծությունը: Հայ գրականության Է՛լ որ բանաստեղծն է գրեթե կրկնել մեծ հայորդուն: Ցանկալի է երկու բանաստեղծների նմանատիպ տողերի համադրումը: Ի՞նչ շրջասույթներ կան Ատոմ Յարճանյանի մասին: 4մ.
- 5.Ինչպե՞ս է մեկնաբանում Չոհրապը մահվան գեղեցկությունը <<Երջանիկ մահը>> նորավեպում. գրի՛ր այդ մահը արդարացնող տողերը: Ի՞նչն է քննում Չոհրապը այս նորավեպում: 4մ.